ծննդաց իմոց, հօրն իմոյ Դալվաթի և մօրն իմոյ Մարիամին, և դահնակ սնու-ցիչ երկու քոռն իմոյ Սառին, Ցաչաքին ողորմութեան. աղաչեմ կենաց: Շինեցաւ սուրբ եկեղեցիս ձեռամբ Յակոբ վարդապետին. ի թվին :ՌՃԼԱ: (1682):

Հրատ. Ջալալեանց, II, 262, Բարխուդարեանց, 73։

61. ՄԱՄԱՏԱՋՈՐ ԳՅՈՒՂ.

***601. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ** մուտքի բարավորի վրա.*

թվ[ի]ն :ՌԾ: (1601):

Հրատ. Բարխուդարեանց, 72։

***602. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսային կամարի վրա՝*

Ես Ազարիա արդա, Դաւիթ էրեց, որ շինող եկեղեցոյ . . .

Հրատ. Բարխուդարեանց, 72։

***603. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑՈՒ** հյուսիսային կամարի այլ երեսին՝*

Խաչս Բաղդասարին է. իւր կողակցին . . .

Հրատ. Բարխուդարեանց, 72։

62. ՏՈՒՄԻ ԳՅՈՒՂ.

Գյուղից հարավ, ձորակով անջատված հարթության վրա սփռված են հին հուշարձանների մնացորդներ։ Համեմատաբար լավ է պահպանվել անտաշ քարերով շինված մի փոքր թաղակապ եկեղեցի, որը կոչվում է «Կարմիր եղցի»․ եկեղեցու ծածկը և հարավային պատը փլված են. հնում նրա արևմտյան պատուհանի միակտուր պսակի վրա եղել է :ՆԽԹ: թվականի արձանագրությունը։ Պսակի այդ քարը կոտրված է երկու մասի, մենք գտանք դպրոցի միջանցքում կազմակերպված փոքրիկ թանգարանի հնագիտական այլ իրերի կողքին, որոնք հավաքել էր ուսուցիչ Ամիրջանյանը։ Այժմ այդ քարը տեղափոխված է Ստեփանակերտի Գավառագիտական թանգարան։

Եկեղեցու շրջապատը գերեզմանատուն է. հին ու նոր տապանաքարերի մեջ գտանք միայն մի փոքր և գեղաքանդակ խաչքար, որն ուներ :ՌԿ: թվականը։

Եկեղեցուց հարավ, թմբերի վրա նշմարվում են շենքի հիմնապատերը, որը համաձայն ավանդության կոչվում է «Թագավորի պալատ»։ Սրանից քիչ հեռու, մի այլ թմբի վրա մատուռի հիմնապատերն են, որոնց մոտ գտնվող մի մեծ և անարձանագիր տապանաքարը նույն ավանդությամբ կոչվում է «Թագավորի գերեզման»։ Գյուղի և այս հնավայրի արանքում եղած աղբյուրը, որի վրա սրբատաշ քարերով ծածկ կա, կոչվում է «Թագավորի աղբյուր»։

Այս գյուղը եղել է Ապումուսէ իշխանի նստավայրը, որը պատերազմեց Բուղայի հետ՝ Գտչա բերդում։ Արձանագրության մեջ «թագավոր» անվանված Գագիկը Ապումուսէի—Մուսէի ժառանգն է։ Այսպիսով, իշխանական այս տոհմին է պատկանել Գտիչ բերդը IX դարում, որի մոտ գտնվում է Տումի գյուղը։

***604. ԿԱՐՄԻՐ ԵՂՑՈՒ** պատուհանի պսակի վրա, 5 տող.*

+ ԻՆԽԹԹՎՐ ԵՒԻ
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍՏՆԳԱԳԻԿԱՈՐԴՈ
ՄՈՒՍԷԻԵՍՍՈՓԻԴՈՒՍՏՐՄՈՒՍԷԻՇԻՆԵՑԻ
ՏՈՒՆԱԾԻՓՐԿՈՒ ԹԻՒՆՀՈԳԻՈՒՄՈԵՒ
ԾՆՈՂԱՑԻ ՄՈՑ

Ի :ՆԽԹ: (1000) ԹՎ[Ի]Ն Հ[Ա]ՅՈՑ, ԵՒ Ի|ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՏՆ. ԳԱԳԻԿԱ. ՈՐԴՈ| ՄՈՒՍԷԻ. ԵՍ ՍՈՓԻ ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ ՇԻՆԵՑԻ| ՏՈՒՆ ԱԾ. Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈ ԻՄՈ ԵՒ| ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ:

Հրատ. Բարխուդարեանց, 79— (ՍՈՓԻԻ փոխարեն ՈՍԿԻ)։